ցած ռէֆօրմների իրագործման անվերջ ձգձգումներից առաջացած դժգոհութիւնը կատարելապէս հասկանալի է համարում: Սակայն, ինչ վերաբերում է Անգլիային, նա վերջերս յիրաւի հրաժարվեց, ըստ երևոյթին, Բ. Դրան վրա միայնակ ազդելու մտքից և մօտեցաւ եւրօպական պետութիւններին առհասարակ, իսկ Ռուսաստանին և Ֆրանսիային՝ մասնաւորապէս: Գոնէ Կ. Պօլսից ստացված վերջին լուրերից երևում է, որ անգլիական դեսպան սըր Կէրրի, որը վերջին ամիսները միայն ձևական յարաբերութիւններ ունէր ուրիշ դեսպանների հետ, անցեալ շաբաթից սկսած՝ միշտ տեսակցում և բանակցում է ռուսաց և ֆրանսիական դեսպանների հետ:

—

Կ. Պօլսից ռուսաց գործակալութեանը հեռագրում են հոկտեմբերի 16-ից. «Երէկ դեսպանները մերժեցին Թիւրքաց կառավարութեան կողմից նշանակած դէլէգատներին, որոնք Կրետէի ժանդարմէրիան վերակազմելու համար կազմված յանձնաժողովը պէտք է մտնէին, առարկելով թէ նրանք ստորին դասակարգին են պատկանում և չը գիտեն ֆրանսերէն լեզուն: Դեսպանները պահանջեցին, որ դրանց տեղ ուրիշները նշանակվեն:»

—

Կ. Պօլսից հեռագրում են հոկտեմբերի 13-ից (25). «Արտակարգ դատարանը կրկին չորս հայեր դատապարտեց մահվան պատժի այն բանի համար, որ նրանք խառնակութիւնների ժամանակ հրացաններ էին արձակում Թիւրքաց զօրքի վրա խաչքեօյի արուարձանում:»

—

Մեզ գրում են Տրապիզօնից. «Այժմ Ակնայ մէջ կը տեսնվին 150-ի չափ դաւամեալներ, իսկ 12 հոգևորականներէն միայն ծերունի վարդապետ մը և ցնդած քահանայ մը մնացած է, այն ալ անոր համար, որ՝ սուլթանին ու տեղապահ Բարթուղիմէոս էֆէնդիին հեռագրեն թէ «կատարեալ խաղաղութիւն ու հանդարտութիւն կը տիրէ:»

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են. «Պէրայում այս օրերս կալանաւորվեցին հայ յեղափոխական կոմիտէտի երկու անդամներ, որոնց վաղուց որոնում էր Թիւրքաց ոստիկանութիւնը: Այն ժամանակ, երբ ոստիկանները կալանաւորում էին հայերին, զօրքերը պաշարեցին այն տունը, ուր գտնվում էին վերջիններս, և փողոցը, որպէս զի հետաքրքիր ամբոխը չը հաւաքվի: Բռնված հայերը ոչինչ դիմադրութիւն չը ցոյց տուեցին և բանտ ուղարկվեցին փակ կառքով:

—

Լօրդ Կանցլէր Գօշէն մի ճառ արտասանեց Բերմինգամում, և, ի միջի այլոց, ասեց հետեւալը. «Պէտք է զարմանալ, թէ ինչ սըխալ հասկացողութիւն ունեն օտարազգիները անգլիական ազգային բնաւորութեան և անգլիական ազգի մասին: Մեզ մեղադրում են, թէ մենք հոգ ենք տանում մեր նիւթական բարեկեցութեան մասին: Իբր թէ օտար ազգերը ուրիշ կերպ են վարվում: Բայց Անգլիան այնուամենայնիւ մի քանի անգամ կարողացել է քաղաքականութեան մէջ ամենաազնիւ անշահախնդրութեան օրինակ ցոյց տալ և ապացուցել է, որ ընդունակ է ինքնազոհութիւն անել՝ մարդկութեան երջանկութեան և գաղափարին ծառայելու համար: Նա վարվել է իրան հպատակ ազգութիւնների հետ, ղեկավարվելով հաւասարութեան, եղբայրութեան և ազատութեան սկզբունքներով աւելի շատ, քան երկրագնդի ուրիշ ազգերը: Հայկական գործերում Անգլիան ի նկատի է ունեցել միայն հայերի և մարդկութեան շահերը: Անգլիան ամենևին չէ ձգտում գրաւել օսմանեան կայսրութեան որ և է մի մասը, բայց դժբախտաբար, ոչ ոք չէ ուզում հաւատալ նրա դիտաւորութիւնների մաքրութեան և նրան կասկածում են խորամանկութեան, մէջ, չը նայելով որ փաստերը նրա օգտին են խօսում:»

—

Կ. Պօլսից «Новости» լրագրին հեռագրում են. «Դեսպանները ամեն օր հաւաքվում են խորհրդակցութեան համար և կատարելապէս համերաշխ են գործում:»

—

Պարիզից. հոկտեմբերի 15-ից (27-ին) ռուսաց գործակալութեան հեռագրում են, որ պատգամաւորների ժողովը, Հանոտօի առաջարկութեամբ, յետաձգեց մինչև հոկտեմբերի 22-ը աջակողմեան մի քանի անդամների հարցապնդումի քննութիւնը արևելեան գործերի մասին:

—

Սուլթանը իր անձնական գումարներից 6000 լիրա խոստացաւ նրան, ով ճիշդ տեղեկութիւններ կը հաղորդի հայ փաստաբան Կօլօլեանի տան մէջ Թիւրքաց երկու պաշտօնեաներին սպանող անձնաւորութիւնների մասին:

—

«Politische Correspondenz» հաղորդում է, որ սուլթանը մի իրադէով աւելացրել է միայն տամնորդական հարկը կէս տօկոս, իսկ ոչխարների վրա դրված հարկը մի տոկոս: Սակայն սրովհետև այդ հարկերի աւելացնելն ևս պատճառաբանվում է զինուորական ֆօնդ կազմելու անհրաժեշտութեամբ, և ոստիկանական մինիստրութիւնը սկսել է զէնք գնել, ուստի յուզմունքը Թիւրքիայի քրիստոնեայ ազգաբնակութեան մէջ շարունակվում է:

—

«Contemporary Review» ամսագրի մէջ մի անանուն հեղինակ, որը, ինչպէս երևում է, լաւ տեղեակ է գործերին, նկարագրելով Կ. Պօլսի կոտորածը, չէ ընդունում այն ընդհանուր տարածված կարծիքը, թէ իբր մեծ պետութիւնների միջամտութիւնը կարող է պատերազմ առաջ բերել: Նրա կարծիքով, բաւական է որ Ֆրանսիան, Ռուսաստանը և Անգլիան համաձայնվեն, և մի շաբաթից յետոյ սուլթանը գահընկէց կը լինի, առանց Թիւրքիայի սահմանները խախտելու, ի մեծ ուրախութիւն թէ մուսուլման և թէ քրիստոնեայ ազգաբնակութեան: Համեմատելով այն անտարբերութիւնը, որ Եւրօպան ցոյց է տալիս Կ. Պօլսի վերաբերմամբ այժմ, այն անտարբերութեան հետ, որ նա ցոյց տուեց 1453-ին, հեղինակը ասում է, որ այս անգամ էլ այդպիսի անտարբերութեան հետևանքները չեն սահմանափակվի միայն Կ. Պօլսով. նրա հատուցումն կը լինի այն պատերազմը, որով այժմ կամենում են արդարացնել Թիւրքաց քրիստոնեաներին երեսի վրա ձգելը:

—

Ռուսաց մամուլի օրգաններից այժմ ամենից շատ «Новое Время» լրագիրն է պնդում եւրօպական կօնֆէրէնցիա գումարելու առաջարկի վրա՝ Թիւրքական հարցը լուծելու համար: Այդ լրագիրը յայտնում է, որ թէև նա միշտ մեծ նշանակութիւն չէ տուել Կ. Պօլսից եկած յուզիչ լուրերին, որոնք, իբր թէ, տարածվում էին լոկ Եւրօպայի հասարակական կարծիքը գրգռելու համար, բայց այժմ, երբ Թիւրքաց կառավարութիւնը կամենում է նոր գլխահարկ սահմանել, նա ստիպված է խոստովանելու, որ սուլթանին տրվող խորհուրդների մէջ տիրապետում է մուսուլման ֆանատիկոսութեան ոգին: Ափսոս միայն, որ «Новое Время» հասել է այդ եզրակացութեան բաւական ուշ, երբ այդ ֆանատիկոսութեան ոգին կարողացաւ անզուսպ կերպով կատարել իր աւերումները և ջնջել մի ամբողջ ազգ աշխարհիս երեսից: «Եթէ այդ այդպէս է—ասում է «Новое Время»—ուրեմն անհրաժեշտ է որքան կարելի է շուտ վերջ դնել այդ ոգուն և սովորական դիպլօմատիական խորհուրդներից ու «բարեկամական նկատողութիւններից» անցնել աւելի իրական, չօշափելի միջոցի: Եւրօպական կօնֆէրէնցիայի անհրաժեշտութիւնը հետզհետէ անյետաձգելի է դառնում: Չը կայ ուրիշ ճանապարհ ցանկալի նպատակին հասնելու համար: Պէտք է դնել և լուծել, պետութիւնների ընդհանուր համաձայնութեամբ, այն ստիպողական միջոցների հարցը, որոնք պէտք է հարկադրեն Թիւրքաց կառավարութեան համոզվել, թէ այժմ նա գործ ունի մեծ պետութիւնների լիակատար համաձայնութեան հետ և այդ պետութիւնները գործողութեան որոշ ծրագիր ունեն արդէն: Ուշացնել անկարելի է:»

—

Բօլգարիայի Սիլիստրէ քաղաքից մեզ գրում են. «Վերջին հաշիւներին նայելով, մէկ ու կէս ամսի ընթացքին մէջ Պօլիսէն հեռացող ընտանիքների և գաւառացի հայերի թիւը 30,000 պատկառելի մի գումարի կը հասնի. դրա մեծ մասը՝ տաս հազար և աւելին Բօլգարիա է գաղթած, մեծ մասը առանց անցագրերի, իսկ փոքր ու խեղճ դասակարգ մը կրցած է և ուզած է անցագիր ձեռք ձգել՝ ի նկատի ունենալով տպագային identité հաստատելու կարևոր պարագայն, որպէս զի կարողանայ վերադառնալ Պօլիս:»

—

«Now Iork Herald» լրագրին հաղորդում են, որ Կ. Պօլսում կալանաւորեցին հինգ հայ յեղափոխականներ: Նրանցից երեքին կալանաւորեցին Պէրայում: Նրանց մօտ գտնվեցին 15 կիլօգրամ դինամիտ, 95 փամփուշտներ, վեց ռէվօլվէրներ և դինամիտային մի կապսուլ:

—

«Politische Correspondenz» լրագրին Կ. Պօլսից գրում են, որ Բ. Դուռը կրկին դիմեց բօլգարական կառավարութեանը՝ պահանջելով չը թոյլ տալ հայերին բնակութիւն հաստատել Բօլգարիայում և խիստ միջոցներ ձեռք առնել նրանց դէմ, որոնք արդէն առաջուց բնակութիւն են հաստատել Բօլգարիայում, որովհետև Թիւրքաց կառավարութեան կարծիքով, այդ բոլոր հայերը անկասկած պատկանում են յեղափոխական ընկերութեան: Բօլգարական կառավարութիւնը պատասխանեց դրան, թէ ինքն չէ կարող արգելել հայերին մանել Բօլգարիա, եթէ նրանք Թիւրքաց անցագրեր ունեն: Իր կողմից, բօլգարական կառավարութիւնը զգալ տուեց, որ հայերի հոսանքը դէպի Բօլգարիա այնքան էլ ախորժելի չէ Բօլգարիային, մանաւանդ որ գաղթող հայերի մեծամասնութիւնը ապրուստի ոչինչ միջոցներ չունի և բօլգարական կառավարութիւնը պէտք է կերակրի և պահի նրանց պետութեան հաշուով: Բօլգարական կառավարութիւնը, սակայն, չէ կարծում, որ այդ հայերը յեղափոխական կօմիտէտի անդամներ լինէին, բայց, յամենայն դէպս, նա կը կարողանայ արգելել հայերի որ և է փորձը, որ յեղափոխական բնաւորութիւն կունենայ և վտանգ կը ներկայացնի Թիւրքիայի հանգստութեան համար:

—

Կ. Պօլսից «Sémaphore» լրագրի թղթակիցը գրում է հոկտեմբերի 16-ից. «Անցեալ շաբաթ վեց դեսպանները սուլթանին ուղարկեցին մի «վերջնական» յայտագիր,—որ սակայն, չը պէտք է ուլտիմատում հասկանալ—որի մէջ պարունակվում էին Եւրօպայի վճիռները: Այդ յայտագրի միտքն է խնամակալութեան տակ դնել Թիւրքիան: Ահա այդ յայտագրի գլխաւոր կէտերը. մեծ վէզիր նշանակել պետութիւնների համաձայնութեամբ և ազատութիւն տալ սադրազամին մինիստրներ ընտրել իր կամքով: Մինիստրները պէտք է պատասխանատու լինեն մեծ-վէզիրի առջև և վերջինն էլ պէտք է պատասխանատու լինի սուլթանի և մեծ պետութիւնների առջև: Ֆինանսական կօնտրօլ հաստատել, ընդարձակելով «Dette publique»-ի վարչութեան լիազօրութիւնները, որի պարտաւորութիւնը պէտք է լինի հաւաքել պետութեան գլխաւոր եկամուտները. այդ վարչութեան խորհրդի անդամները պէտք է նշանակվեն պետութիւնների համաձայնութեամբ: Բոլոր վիլայէթներում խառն ժանդարմէրիա պէտք է կազմակերպվի մահմետական և քրիստոնեայ տարրերի թւի համեմատ, և այդ ժանդարմէրիայի կազմակերպութիւնը պէտք է յանձնվի եւրօպական օֆիցէրներին: Պետութիւնները կը միջամտեն մի փոխառութիւն աջողացնելու համար, որպէս զի Թիւրքիան կարողանայ անյապաղ վերացնել իր ֆինանսական դժուարութիւնները:»

—

«Hamb. Correspondent»-ի մէջ տպված է հանգուցեալ իշխան Լօբանօվի յիշատակագիրը արևելեան գործերի մասին: Այդ յիշատակագիրը իշխան Լօբանօվ ուղարկել է եւրօպական մեծ պետութիւններին Թագաւոր Կայսրի ճանապարհորդութեան սկզբում:

Յիշատակագիրը յայտնում է, թէ եւրօպական խաղաղութեան պահպանութիւնը ռուսաց քաղաքականութեան ղեկավարող ամենաբարձր սկզբունքներից մէկն է հանդիսանում: Սպառազինված միջամտութիւնը, ինչպէս օրինակ, Թիւրքաց մայրաքաղաքի գրաւումը կարող է սաստիկ ընդհարումներ առաջ բերել մեծ պետութիւնների մէջ, այնպէս որ պատերազմը անխուսափելի կը դառնայ: Այդ միջամտութեան առաջ բերած աղէտները անհամեմատ աւելի խոշոր կը լինեն, քան այն աղէտը, որ առաջ է գալիս հայերին հալածելուց: Ահա ինչ պատճառով եւրօպական սպառազինված միջամտութիւնը պէտք է բաց թողնել a priori ամեն մի կօմբինացիա կազմելիս: Թիւրքիայում ամենալի կարգեր հաստատելու համար, որոնց շնորհով ապահովված լինէին քրիստոնեայ ազգաբնակութեան վիճակը և խաղաղութիւնը, պէտք է օգտվել Թիւրքիայում գոյութիւն ունեցող միակ իշխանութիւնից, այն է սուլթանի անձնաւորութիւնից: Այդ իշխանութիւնը պետութիւնները պէտք է պահպանեն և ուժեղացնեն իրանց ձեռքում գտնված բոլոր միջոցներով, որովհետև միայն սուլթանի միջոցով հնարաւորութիւն կայ ռէֆօրմները մտցնել: Պետութիւնները պէտք է իրանց կարողութեան չափ աջակցեն սուլթանին այդ վերանորոգիչ գործունէութեան մէջ և, հարկաւոր դէպքում, մինչև անգամ նիւթական օգնութիւն ցոյց տան»:

## ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆԸ

—

Չը նայելով, որ գործերի դրութիւնը Թիւրքիայում օրից օր վատթարանում է, այնպէս որ նոյն իսկ միշտ անտարբեր և անհամբերաչխ եւրօպական դիպլօմատիան, ինչպէս հաղորդեց հեռագիրը, սկսել է մտածել սուլթանի գահընկէցութեան մասին, այնուամենայնիւ, Եւրօպայում ոչ մի փոփոխութիւն դէպի առաջ կամ յետ չէ նկատվում: Պահպանել statu quo,—ահա ժամանակակից դիպլօմատիայի դաւանութեան հանգանակը: Պահպանել խաղաղութիւնը—ահա դիպլօմատիայի երկրորդ նշանաբանը: Եւ այդ երկու նպատակներին հասնելու համար, զոհ են բերվում մարդկային ամենանուիրական իրաւունքները, ծրագրվում, մշակվում են ամեն տեսակ կօմբինացիաներ և ստեղծվում են ամեն տեսակ ենթադրութիւններ: Գրեթէ ընդհանուր համոզմունք է, թէ ֆրանս-ռուսական բարեկամական յարաբերութիւնների հանդիսաւոր վաւերացումից յետոյ, խաղաղութեան գործը միանգամայն ապահոված է և մեծ պետութիւնների այժմեան քաղաքական համախմբումը ոչ մի վտանգ չէ ներկայացնում աշխարհի խաղաղութեան համար: Բայց կան և յոռետեսներ, որոնք ջանք են անում ապացուցանել, թէ այդ խաղաղութիւնը շատ անհաստատ է, թէ նա ամեն րոպէ կարող է խախտվել և խախտվել զարհուրելի կերպով: Խաղաղութեան ոչ մի վըտանգ չը սպառնալու ենթադրութիւնները անվում են այն հիման վրա, որ իբր թէ «երկպետեան և «երեքպետեան» դաշնակցութիւնները քաղաքականապէս հաւասարակշռում են միմեանց. բայց չէ՞ որ 1870 թւին Գերմանիայի և Ֆրանսիայի ույժերը նոյնպէս հաւասարակշռում էին միմեանց և, սակայն, այդ հաւասարակշռութիւնն անկարող հանդիսացաւ սարսափելի ընդհարման առաջն առնել: Այդ նկատումները դրդել են ֆրանսիացի յայտնի քաղաքատնտես Մօլինարիին, հանդէս գալ «Temps» լրագրում և «Խաղաղութեան ապահովութիւնը» վերնագրով մի յօդուածի մէջ ապացուցանել թէ, չը նայելով «երկպետեան» և «երեքպետեան» դաշնակցութիւններին, խաղաղութիւնը այսօր աւելի քան երբէք վտանգված պէտք է համարել:

Մօլինարի հաստատում է, որ Ֆրանսիայի և Ռուսաստանի բարեկամութիւնը վերահաստատել է Եւրօպայի հաւասարակշռութիւնը և այդ բարեկամութիւնը ինքն իրան ոչ մի վտանգ չէ ներկայացնում Եւրօպայի խաղաղութեան համար, բայց նա չէ նպաստում խաղաղութեան հաստատութեան և չէ կարող պատերազմի վըտանգի առաջն առնել: Միւս կողմից, Մօլինարի հրաւիրում է ուշադրութիւն այն հանգամանքի վրա, որ Անգլիան և երկրորդական պետութիւնները,—Դանիա, Հօլլանդիա, Բէլգիա, Շվէյցարիա, որոնք պատերազմի պատճառով կենթարկվեն ֆինանսական և տնտեսական մեծ վնասների, ոչ մի հնարաւորութիւն չունեն այն դէպքում, երբ պատերազմ ծագի մեծ պետութիւնների մէջ, խափանել այդ պատերազմը: Բայց երբ այդ պետութիւնները, որոնք չեն մտնում ոչ երկպետեան, ոչ երեքպետեան դաշնակցութեան մէջ, Անգլիայի հետ միասին մի երրորդ քաղաքական համախմբում կամ դաշնակցութիւն կազմեն, այն ժամանակ, Մօլինարիի կարծիքով, խաղաղութեան գործը միանգամայն ապահոված կը լինի: Այդ պետութիւնները, որոնք այսօր քաղաքական ոչնչութիւններ են ներկայացնում, միասին այնքան ույժ ունեն, որ կարող է հաւասարվել երկու դաշնակցութիւնների իւրաքանչիւրի ույժին. նրանք կարող են միասին 1,095,000 զօրք դուրս բերել, մի մեծ նաւա-

